

հաստատված է
«ԲԵՍ ՔԱՐԴ» ՍՊԸ /հր. 01/2016, առ
05.12.2016թ/ կողմից
Հրապարակային պայմանագրի
AYO ծրագրին մասնակցության պայմաններ
Ուժի մեջ է 09.12.2016թ.-ից

ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կազմակերպիչ - «Բեստ Քարդ» ՍՊԸ, որը իրականացնում է AYO ծրագիրը, դրա կառավարումը և կազմակերպումը՝ համաձայն սույն պայմանների (այսուհետ՝ Պայմաններ) և Կազմակերպչի և Բանկի միջև կնքված պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր):

Բանկ - «Ամերիաբանկ» ՓԲԸ, որի կողմից թողարկված վճարային քարտերը (ներառյալ՝ AYO Visa Classic և AYO Visa Gold) Պայմանների համաձայն կիրառելի են AYO ծրագրի ներքո:

Ծրագիր կամ AYO ծրագիր - Կազմակերպչի կողմից իրականացվող ծրագիր, որի շրջանակներում Պայմանների համաձայն Մասնակիցներին տրամադրվում է Հետվճար, խրախուսական պարգևներ, կազմակերպչի կողմից հայտարարված ակցիաներին մասնակցության իրավունք:

AYO քարտ/եր - Բանկի և Կազմակերպչի համատեղ թողարկվող վճարային քարտեր, որոնք կրում են «AYO card» ապրանքային նշանը (AYO Visa Classic և AYO Visa Gold վճարային քարտեր) և Մասնակիցներին իրավունք է տալիս Պայմաններով սահմանված պայմաններին համապատասխան ստանալ Հետվճար և (կամ) խրախուսական պարգև և/կամ մասնակցել կազմակերպչի կողմից հայտարարված ակցիաներին:

Այլ վճարային քարտ/եր - Բանկի կողմից ինչպես նախկինում թողարկված և գործող, այնպես էլ նոր տրամադրվող բոլոր վճարային քարտերը (բացառությամբ AYO քարտերի, նվեր քարտերի և բիզնես քարտերի), որոնց մասով կիրառելի է AYO ծրագիրը և որոնցով Գործընկերոջմոտ կատարված անկանխիկ վճարումների դիմաց Պայմանների համաձայն տրամադրվում է Հետվճար:

Քարտ/եր - AYO քարտ կամ Այլ վճարային քարտ: Քարտի թողարկման, օգտագործման և սպասարկման բոլոր պայմանները և կանոնները սահմանվում են Բանկի կողմից, բացառությամբ Ծրագրի մասնակցության պայմանների:

Հետվճար - AYO և Այլ վճարային քարտերով Գործընկերոջ մոտ կատարված գնումների/վճարումների (այդ թվում առցանց կատարված) գումարի մասնակի վերադարձ Մասնակցին, որի չափը սահմանում է Կազմակերպիչը՝ ապահովելով դրա իրականացումը:

Մասնակից - AYO քարտերի կամ Այլ վճարային քարտի քարտապան, որն ընդունել/ակցեպտավորել է Պայմանները:

Գործընկեր - Ծրագրի շրջանակներում Կազմակերպչի հետ համագործակցող իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որի առևտրային և սպասարկման կետերում իրականացրած անկանխիկ գործարքների (այդ թվում առցանց կատարված) դիմաց Մասնակիցը Պայմանների համաձայն իրավունք ունի ստանալ Հետվճար: Գործընկերների ցանկը հրապակավում է Կազմակերպչի պաշտոնական կայքէջում (www.ayocard.am):

Խրախուսական պարզև – ապրանքներ (ծառայություն, գույքային իրավունք կամ այլ շահ), որոնք Մասնակիցը կարող է ստանալ՝ Ծրագրի շրջանակներում:

Ակցիաներ – կազմակերպչի կողմից Ծրագրի շրջանակում հայտարարվող զեղչային (կուտակային) և այլ ակցիաներ:

Կազմակերպչի կայքէջ – Կազմակերպչի պաշտոնական կայքէջ համացանցում Ծրագրի վերաբերյալ, որը հասանելի է www.ayocard.am հասցեով:

Բանկի կայքէջ - «Ամերիաբանկ» ՓԲԸ պաշտոնական կայքէջ, որը հասանելի է www.ameribank.am հասցեով:

Պայմանները - սահմանում և կարգավորում են Կազմակերպչի և Մասնակցի (երկուսը միասին Կողմեր) միջև Ծրագրին մասնակցության հետ կապված փոխհարաբերությունները, ինչպես նաև Ծրագրին մասնակցության և իրականացման պայմանները: Պայմանները հրապարակում են Կազմակերպչի կայքէջում:

Ակցեպտավորում – Մասնակցի կողմից իր համաձայնության տրամադրում համապատասխան պայմաններին և դրանցում ներառված համաձայնություններին՝ հաստատելով, որ նախապես ծանոթացել և ընդունել է դրանք:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1.1. Պայմանները հանդիսանում են հրապարակային առաջարկ (օֆերտա), որը համարվում է Մասնակցի կողմից ընդունված (ակցեպտավորված):

1.1.1. Բանկի սահմանած ձևանմուշով Մասնակցի ստորագրած/վավերացրած Ayo կամ Այլ վճարային քարտ/եր/ի հայտը

(կամ հայտ-պայմանագիրը) կամ հանձնարարականը Կազմակերպչին կամ Բանկ ներկայացվելու պահից, կամ

- 1.1.2. Ծրագրին մասնակցության վերաբերյալ համապատասխան դրույթ պարունակող Բանկի վճարային քարտերի սպասարկման պայմանները և օգտագործման կանոնները և/կամ դրանցում փոփոխությունները ընդունելու մասին Մասնակցի հաստատումը Բանկի համար ընդունելի և տվյալ ծառայության համար սահմանված եղանակով տրամադրելու/ակցեպտավորելու պահից:
- 1.2. Պայմանների ներքո Կողմերի միջև իրավահարաբերությունները ծագում են/ուժի մեջ են Մասնակցի ակցեպտը 1.1 կետում սահմանված կարգով Կազմակերպչի կամ Բանկի կողմից ստանալու պահից, որը և այդ պահից համարվում է Կողմերի միջև կնքված պայմանագիր: Ակցեպտավորելով Պայմանները՝ Մասնակիցը հաստատում է, որ ծանոթացել և ընդունել է Պայմաններում նշված բոլոր կետերը, համաձայն է և պարտավորվում է դրանք կատարել:
- 1.3. Պայմանները պարտադիր են ինչպես Մասնակցի, այնպես էլ Կազմակերպչի համար: Մինչ Պայմանագիր կնքելը՝ առաջարկը ակցեպտավորելը, Մասնակիցը պետք է ծանոթանա Պայմանների հետ և անհամաձայնության դեպքում հրաժարվի մասնակցությունից: Պայմանները, ինչպես նաև հետագայում դրանցում հետագայում կատարվող փոփոխությունները կիրառելի են Կողմերի համար՝ ՀՀ և ԼՂԸ տարածքում Ծրագրի իրականացման ամբողջ ժամանակահատվածում:
- 1.4. Պայմանները սահմանվում և կարող են միակողմանիորեն փոփոխվել Կազմակերպչի կողմից, հասանելի են Կազմակերպչի և Բանկի ինտերնետային կայքէջում: Նշված փոփոխությունները Կազմակերպիչը Մասնակցին ծանուցում է դրանց ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան 10 (տասն) օր առաջ՝ Կազմակերպչի կայքէջում դրանք հասանելի դարձնելու, իսկ Կողմերի միջև նախապես համաձայնեցված լինելու դեպքում՝ նաև Մասնակցի համար նախընտրելի այլ եղանակով: Եթե մինչև փոփոխությունների ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը Մասնակիցը գրավոր չի տեղեկացնում Կազմակերպչին կամ Բանկին՝ Պայմանների ներքո Կողմերի միջև իրավահարաբերությունները դադարեցնելու իր ցանկության մասին և փոփոխություններից հետո իրականացվում է Քարտով ցանկացած գործարք ապա փոփոխությունները համարվում են ընդունված (ակցեպտավորված) Մասնակցի կողմից:
- 1.5. Ծրագրի Կազմակերպիչն իրավունք ունի ցանկացած պահի դադարեցնելու Ծրագրի գործունեությունը՝ այդ մասին երեք ամիս առաջ տեղեկացնելով Ծրագրի Մասնակիցներին՝ Կազմակերպչի կայքէջում այդ մասին տեղեկատվություն տեղադրելով:
- 1.6. Ծրագրի մասին ցանկացած տեղեկություններ, Գործընկերների ցանկը, Գործընկերների հետ համագործակցության պայմանները, այդ թվում՝

տրամադրվող Հետվճարի/ների չափերը, խրախուսական պարգևների, անցկացվող ակցիաների և հատուկ առաջարկների մանրամասները և ցանկացած այլ տեղեկություն, ինչպես նաև դրանցում փոփոխությունները, ներկայացվում է Կազմակերպչի կայքէջում: Կազմակերպիչն իրավունք ունի նաև ցանկացած պահի, առանց Մասնակցին նախապես տեղյակ պահելու, փոխել Գործընկերների ցանկը, Գործընկերոջ կողմից տրամադրվող Հետվճարի չափը ու վճարման կարգը: Կազմակերպիչը պարտավորվում է սույն կետում նշված տեղեկությունների ցանկացած փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակել Կազմակերպչի կայքէջում ոչ ուշ, քան համապատասխան փոփոխության ուժի մեջ մտնելու օրվանից երեք օր առաջ:

- 1.7. Կազմակերպիչն իրավունք ունի դադարեցնել համագործակցությունը ցանկացած Գործընկերոջ հետ՝ առանց նախապես տեղյակ պահելու Մասնակցին: Կազմակերպիչը պարտավորվում է տվյալ Գործընկերոջ համագործակցությունը դադարեցնելու վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակել Կազմակերպչի կայքէջում ոչ ուշ, քան համագործակցության դադարեցման օրվանից երեք օր առաջ: Համագործակցությունը դադարեցրած Գործընկերոջ առևտրային և սպասարկման կետերում իրականացրած անկանխիկ գործարքների դիմաց Հետվճարներ չեն իրականացվում:
- 1.8. Քարտի վավերականության ժամկետն ավարտվելու դեպքում դադարում է նաև Ծրագրին մասնակցությունը, եթե Մասնակցի քարտը չի վերաթողարկվել «Ամերիաբանկ» ՓԲԸ վճարային քարտերի սպասարկման պայմաններ և օգտագործման կանոնների համաձայն կամ Մասնակիցը չի դիմել նոր քարտ ստանալու համար: Քարտի վերաթողարկման հիմքով վերականգնվում է նաև մասնակցության իրավունքը Ծրագրին:
- 1.9. Կազմակերպիչն իրավունք ունի միակողմանիորեն դադարեցնել Մասնակցի մասնակցությունը Ծրագրին, եթե.
 - 1.9.1. Մասնակիցը խախտել է կամ չի հետևել Պայմանների կատարմանը:
 - 1.9.2. Մասնակիցը չարաշահում Ծրագրով իրեն ընձեռած հնարավորությունները:
 - 1.9.3. Մասնակիցը տրամադրում է իրականությունը չհամապատասխանող, թյուր տեղեկատվություն՝ Կազմակերպչին, Գործընկերոջը կամ Բանկին:
 - 1.9.4. Բանկը դադարեցրել է Քարտի սպասարկումը կամ փակել է Քարտը՝ համաձայն «Ամերիաբանկ» ՓԲԸ վճարային քարտերի սպասարկման պայմանների և օգտագործման կանոնների:
- 1.10. Մասնակիցն իրավունք ունի դադարեցնել Ծրագրին իր մասնակցությունը՝ ներկայացնելով Քարտի փակման դիմում/հայտ՝ համաձայն «Ամերիաբանկ» ՓԲԸ վճարային քարտերի սպասարկման պայմանների և օգտագործման կանոնների, իսկ Այլ վճարային քարտերի քարտապան մասնակիցները նաև

Բանկի համար ընդունելի այլ եղանակով հայտնել Ծրագրի մասնակցությունից հրաժարվելու մասին:

- 1.11. Երրորդ անձի կողմից Քարտի անօրինական օգտագործման դեպքում, Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում Մասնակցի նկատմամբ:
- 1.12. Գործընկերը լիազորված չէ հանդես գալու հայտարարությամբ կամ երաշխավությամբ Կազմակերպչի անունից, բացի այն լիազորություններից, որոնք նախատեսված են Պայմաններով, այլ փաստաթղթերով և համաձայնեցված են Կազմակերպչի հետ: Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում Գործընկերոջ այն հայտարարությունների համար, որոնք հիմնավորված չեն Կազմակերպչի հետ համաձայնեցված փաստաթղթերով:
- 1.13. Գործընկերը պատասխանատվություն չի կրում Հետվճարի չվճարման համար, եթե նա, Մասնակցի կողմից ապրանք կամ ծառայություն ձեռք բերելիս, պատշաճ կարգով իրականացրել է Քարտով վճարման ընդունումը:
- 1.14. Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում Գործընկերների կողմից Մասնակցին մատուցած Ծառայությունների որակի և երաշխիքային սպասարկման համար: Երաշխիքային սպասարկումը, ոչ պատշաճ որակով ապրանքի վերադարձն ու փոխանակումն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. ՀԵՏՎՃԱՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

- 2.1. Գործընկերների առևտրային և սպասարկման կետերում Մասնակցի կողմից Քարտով կատարված անկանխիկ վճարումները (այդ թվում առցանց) ենթակա են հետվճարի՝ համաձայն Պայմանների, Կազմակերպչի կայքէջում նշված չափերով:
- 2.2. Հետվճար չի վճարվում հետևյալ դեպքերում՝
 - 2.2.1. անկանխիկ վճարումով ձեռքբերված ապրանքը/ծառայությունը վերադարձվել է մինչև հետվճարի վճարման օրը ներառյալ,
 - 2.2.2. Քարտը և քարտապանի բոլոր հաշիվները Բանկում Պայմաններով սահմանված Հետվճարի կատարման օրվա դրությամբ փակված են:
- 2.3. Տվյալ Քարտի գծով կուտակված Հետվճարի ենթակա գումարի վճարումն իրականացվում է ամսական պարբերականությամբ՝ մինչև գործարքի (վճարման) կատարման ամսվան հաջորդող ամսվա վերջին աշխատանքային օրը ներառյալ: Վճարվումն իրականացվում է այն քարտի հաշվեհամարին, որով կատարվել է գործարքը: Այն դեպքում, երբ նշված հաշվեհամարը փակված է, Հետվճարը փոխանցվում է քարտապանի՝ Բանկում առկա այլ գործող հաշվեհամարի: Հետվճարի փոխանցման պահին գործող հաշիվ չլինելու դեպքում Հետվճար չի տրամադրվում:
- 2.4. Ծրագրի շրջանակներում հիմնական քարտերին տրամադրված կից քարտերով իրականացված գործարքները նույնպես ենթակա են Հետվճարի

ստացման, որի դեպքում Հետվճարը փոխանցվում է հիմնական քարտապանին:

- 2.5. Արտարժութային քարտերով իրականացված գործարքների դեպքում հետվճարը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով գործարքի գումարը ՀՀ դրամով՝ Բանկի վճարային քարտերի սպասարկման պայմաններով և օգտագործման կանոններով սահմանված փոխարժեքով, իսկ Հետվճարի վճարումը արտարժութային քարտային հաշվին կատարվում է վճարման պահին Բանկի կողմից սահմանված արտարժույթի վաճառքի փոխարժեքով:
- 2.6. Վճարված հետվճարի մասին ընդհանուր տեղեկատվությունը հասանելի է Մասնակցին տրամադրվող ամսական քաղվածում, ինչպես նաև ինտրնետ/մոբայլ բանկ համակարգերով գեներացվող քաղվածքներում:
- 2.7. Հետվճարները ենթակա են հարկման «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն: Հետվճարները Մասնակիցներին հաշիվներին փոխանցվում են եկամտային հարկը օրենքով սահմանված չափով գանձելուց հետո:
- 2.8. Հետվճարի ստացման համար Մասնակիցը պարտավոր չէ գործարք իրականացնելուց առաջ հաղորդել Գործընկերոջը, որ դա Ծրագրի շրջանակներում իրականացվող գործարք է: Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում Հետվճարի վճարումը չիրականացնելու համար, եթե Մասնակիցը Գործընկերոջը չի վճարել Քարտով (այդ թվում առցանց եղանակով):
- 2.9. Հետվճարի ստացման համար հիմք է հանդիսանում Գործընկերոջ վճարային տերմինալով իրականացրած անկանխիկ գործարքը: Խնդիրների դեպքում Մասնակիցը կարող է ներկայացնել Գործընկերոջ վճարային տերմինալով իրականացրած անկանխիկ գործարքը հավաստող կտրոնը (առցանց վճարման անդորրագիրը) կամ Բանկից ստացված Քարտով իրականացրած գործարքների քաղվածքը:
- 2.10. Մասնակցի կողմից գնված ապրանքի հետվերադարձի դեպքում Գործընկերը պարտավորվում է հետ վերադարձնել գումարը Մասնակցի Քարտին, իսկ Բանկն իր հերթին գանձում է վճարած հետվճարի չափով գումար (այդ գործարքի մասով Հետվճարը վճարված լինելու դեպքում): Ապրանքի հետվերադարձի դեպքում իրավահարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 2.11. Քարտի օգտագործումը չի բացառում տվյալ Գործընկերոջ մոտ գործող զեղչերին մասնակցելը, եթե այլ պայմանավորվածություն ձեռք չի բերվել Կազմակերպչի և Գործընկերոջ միջև: Եթե առկա է Գործընկերոջ հետ որևէ պայմանավորվածություն, որի հետևանքով Հետվճար չի վճարվելու, ապա Կազմակերպիչն այդ մասին պարտավորվում է տեղեկացնել իր կայքէջում տեղակայված տեղեկությունների միջոցով ոչ ուշ, քան տվյալ պայմանավորվածության ուժի մեջ մտնելու օրվանից երեք օր առաջ:
- 2.12. Հետվճար Մասնակցին կարող է չիրականացվել նաև այն դեպքերում, եթե Գործընկերոջ հետ հայտարարվում է ակցիա կամ միջոցառում

Մասնակիցների համար հատուկ պայմաններով, որի մասին նախապես Մասնակիցը տեղեկանում է Կազմակերպչի կայքէջի կամ հաղորդակցման այլ աղբյուրներից մեկի միջոցով:

3. ԽՐԱԽՈՒՍԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐ ԵՎ ԱԿՑԻԱՆԵՐ

- 3.1. Մասնակիցը Ծրագրի շրջանակներում կարող է ստանալ նաև Խրախուսական պարգևներ, ինչպես նաև մասնակցել ակցիաներին՝ համաձայն նախապես հայտարարված ակցիաների պայմանների:
- 3.2. Մասնակիցը, ով ցանկություն է հայտնում մասնակցելու Ծրագրի կողմից անցկացվող ակցիաներին և այլ միջոցառումներին, նախապես պետք է ծանոթանա դրանց պայմանների հետ Կազմակերպչի պաշտոնական կայքէջի կամ այլ գովազդային նյութերի միջոցով:

4. ԱՆՁՆԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

- 4.1. Ayo քարտի քարտապան Մասնակիցը, Պայմանների ակցեպտավերմամբ համաձայնում է, որ Բանկը և Կազմակերպիչը միմյանց տրամադրեն Ayo քարտի հայտում (կամ հայտ-պայմանագրում) առկա անձնական տվյալները և Բանկային գաղտնիք պարունակող տեղեկությունները (առկայության դեպքում), ներառյալ Ayo քարտով իրականացված գործարքների մասին՝ Պայմաններով սահմանված կարգով Ծրագրի իրականացումն ապահովելու համար:
- 4.2. Այլ վճարային քարտերի քարտապան Մասնակիցը, Պայմանների ակցեպտավերմամբ համաձայնում է, որ Պայմաններով սահմանված կարգով Ծրագրի իրականացումն ապահովելու համար Բանկը և Կազմակերպիչը միմյանց տրամադրեն այդ քարտերով անկանխիկ գործարքների մասին տեղեկություններ՝ առանց բացահայտելու Քարտի կամ Մասնակցի անձնական տվյալների վերաբերյալ տեղեկություններ:
- 4.3. Մասնակիցը համաձայնվում է Կազմակերպչից և կամ Բանկից ստանալ Ծրագրի հետ կապված առևտրային, ոչ առևտրային կամ այլ տեղեկատվություն՝ բջջային հաղորդագրության միջոցով, նամակների տեսքով էլ-փոստին և հաղորդակցման այլ ճանապարհներով, որոնք նշվել են Մասնակցի կողմից Քարտի ձեռքբերման ժամանակ:
- 4.4. Մասնակիցը համաձայնվում է իր անձնական տվյալների գրանցմանը, մշակմանը և պահպանմանը Ծրագրի շրջանակներում: Այդ տվյալները Կազմակերպիչը պարտավոր է օգտագործել Ծրագրի իրականացման շրջանակներում Մասնակցին՝ Գործընկերների, Ծրագրի ակցիաների մասին և այլ տեղեկատվության տրամադրման համար:

- 4.5. Անձնական տվյալների կամ այլ տեղեկատվության փոփոխման դեպքում Մասնակիցը պետք է հայտի այդ մասին Բանկին:
- 4.6. Պայմաններով նախատեսված է, որ այն տեղեկատվությունը, որը հայտնի է դարձել Կազմակերպչին Ծրագրի իրականացման ընթացքում, հանդիսանում է խիստ գաղտնի, բացառությամբ՝ հրապարակային տեղեկատվության: Մասնակցի անձնական տվյալները առանց նրա գրավոր համաձայնության չեն կարող փոխանցվել երրորդ կողմի, բացառությամբ՝ Պայմաններով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի:
- 4.7. Պայմանների համաձայն՝ Կազմակերպիչը Մասնակցի մասին տեղեկությունները կարող է հրապարակել բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:
- 4.8. Տեղեկատվության գաղտնիությունը պահպանվում է Կազմակերպչի կողմից Պայմանների գործողության ամբողջ ընթացքում:
- 4.9. Կազմակերպիչը պարտավորվում է կիրառել անձնական տվյալների, Բանկային գաղտնիքի մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր պահանջները: Կազմակերպչի կողմից Մասնակցի անձնական տվյալների հետ իրականացվող բոլոր գործողությունները, ինչպիսիք են՝ տվյալների հավաքագրումը, գրանցումը, համակարգումը, պահպանումը, ճշգրտումները (թարմացում և փոփոխում), առանձնացումը, օգտագործումն ու փոխանցումը, ապասկտիվացումը, հեռացումը և ոչնչացումը, նախատեսված են Պայմաններով և ՀՀ օրենսդրությամբ:
- 4.10. Կազմակերպիչը ապահովում է այդ տվյալների պաշտպանությունը՝ համաձայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների:

5. ՄԱՍՆԱԿՑԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԵՏԵՐ ԵՎ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՆԵՐ

- 5.1. Ծրագրի մասնակցության հետ կապված հարցերի դեպքում Մասնակիցը կարող է զանգահարել Կազմակերպչի թեժ գծի հեռախոսահամարին՝ +374 10 50 25 10 կամ դիմել Ծրագրի սպասարկման կենտրոններ, որոնք գտնվում են «Երևան մոլ» և «Ռոսիա մոլ» առևտրի կենտրոններում (AYO քարտի սպասարկման տաղավարներ): Ծրագրի սպասարկման կենտրոնների աշխատանքային ժամերն են՝ երկուշաբթի-ուրբաթ օրերին ժամը՝ 10:00-19:00-ը և շաբաթ օրը ժամը՝ 13:00-17:00-ը:
- 5.2. Կազմակերպչին ներկայացված Հարցերի պատասխանները Մասնակիցը կարող է ստանալ նույն օրը, բացառությամբ այն դեպքերի, երբ հարցին պատասխանելու համար անհրաժեշտ են լրացուցիչ պարզաբանումներ: Որոշ դեպքերում կարող է սահմանվել մինչև 30 օր ժամանակ:
- 5.3. Քարտի սպասարկման և/կամ քարտով կատարված գործարքների վերաբերյալ հարցերի դեպքում Մասնակիցը կարող է դիմել Բանկ՝

համաձայն «Ամերիաբանկ» ՓԲԸ վճարային քարտերի սպասարկման
պայմանների և օգտագործման կանոնների: